«ԱԳԱԹ»

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՆԱՆՑ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքների և արդարադատության մատչելիություն

- ՄՈԴԵԼՆԵՐ
- ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ
- ԼԵԶՈՒ
- ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊ

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲ

Ուղեցույցը պատրաստեց՝
Արմեն Ալավերդյանը

Խմբագիր, հաշմանդամության ոլորտի փորձագետ՝
Կարինե Գրիգորյան

Ուղեցույցի հավելյալ նյութերը տրամադրեց՝
ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը

Ծրագրի ղեկավար՝
Գայանե Գրիգորյան

Ուղեցույցը պատրաստվել է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ի կողմից՝ «Մարդու իրավունքների և արդարադատության մատչելիություն» ծրագրի շրջանակներում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

5 Նախաբան

7 Հաշմանդամություն

7 Հաշմանդամություն ունեցող անձինք

7 Հաշմանդամության հիմքով խտրականություն

7 Հաշմանդամության մոդելները

11 Հաշմանդամությանն առնչվող օրենսդրություն

15 Հաշմանդամության խումբ սահմանելու կարգը

16 Հաշմանդամության խումբ սահմանելու (կամ չսահմանելու) մասին ԲՍՓՀ-ի որոշման բողոքարկման կարգը

16 Հանրային շենքերի և շինությունների ֆիզիկական մատչելիությունը

17 Հաշմանդամություն ունեցող երեխայի՝ հատուկ կամ հանրակրթական (ներառական) դպրոցում կրթություն ստանալու իրավունքի կարգավորումները

18 Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրումը

18 Հաշմանդամություն ունեցող դիմորդների արտոնությունները

19 Հաշմանդամություն ունեցող աշխատողների արտոնությունները

20 Հաշմանդամություն ունեցող աշխատողներին իրենց աշխատակազմում ներառող գործատուների արտոնությունները

20 Հաշմանդամություն ունեցող անհատ ձեռներեցների արտոնությունները

21 Հաշմանդամություն ունեցող անձանց թոշակները

21 Հաշմանդամություն ունեցող անձանց՝ ընտանեկան նպաստ ստանալու խնդրի իրավական կարգավորումը

22 Հաշմանդամություն ունեցող անձին խնամող անձի վարձատրության խնդիրը

22 Հաշմանդամություն ունեցող անձին խնամող անձի աշխատանքային ստաժի խնդրի կարգավորումը

22 Հաշմանդամություն ունեցող անձանց անվճար դեղորայք ստանալու իրավունքը

23 Վերականգնողական սարքերի ստացման կարգը

23 Վերականգնողական, տեխնիկական միջոցների եվ այլ օժանդակ սարքերի տրամադրումը

29 Ժառանգության հետ կապված դեպքերում հաշմանդամություն ունեցող անձանց արտոնությունները

29 Նոտարի ծառայություններից օգտվելու կարգը տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց և անկողնային հիվանդների համար

30 Հաշմանդամություն ունեցող անձանց՝ քաղաքային տրանսպորտից օգտվելու արտոնությունները

31 Հաշմանդամության տեղեկանքում անաշխատունակության մասին նշում կատարելու հետ կապված խնդրի իրավական կարգավորումը

32 Ինչպե՞ս ստանալ մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը

34 Հաշմանդամությանն առնչվող ճիշտ և սխալ տերմինաբանություն

35 Վարվելակերպի ընդհանուր կանոններ

ՆԱԽԱԲԱՆ

Երկրագնդի բնակչության մոտ 15 տոկոսն ունի որևէ տեսակի հաշմանդամություն: Հայաստանի Հանրապետությունում, համաձայն պաշտոնական տվյալների, հաշմանդամություն ունեցող անձանց թիվը 2019 թվականի հունվարի դրությամբ կազմում է շուրջ 192000 մարդ:

Հայաստանի սոցիալ-տնտեսական վերափոխումների ներկա պայմաններում հատուկ ուշադրություն են պահանջում բնակչության սոցիալապես խոցելի խավերի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները և իրավունքները:

«Հաշմանդամություն» հասկացության զարգացման ողջ պատմության ընթացքում կարելի է տեսնել անբարյացակամությունից, ընդհուպ մինչև հասարակության մյուս անդամների կողմից մեկուսացումից, հաջորդական անցում դեպի որոշ աշխատանքներում հաշմանդամություն ունեցող անձանց մի մասի ներգրավման հնարավորությունը, և, վերջապես, դեպի հասարակության մեջ նրանց ներառման անհրաժեշտության ըմբռնումը: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը երկար տարիների աշխատանքի և բուռն քննարկումների արդյունքում 1993թ. ընդունեց «Հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ապահովման ստանդարտ կանոնները»: Ստանդարտ կանոնները, ինչպես նաև Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան (1996թ.) որոշակի դրական դեր խաղացին հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության գործում, սակայն միջազգային հանրության և հաշմանդամային շարժման ակտիվիստների ու փորձագետների շրջանակներում հասունանում էր ավելի համապարփակ և միաժամանակ պարտավորեցնող փաստաթղթի ընդունման անհրաժեշտության ըմբռնումը:

2006թ. դեկտեմբերի 13-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան (այսուհետ տեքստում՝ Կոնվենցիա), որն ուղեցույց դարձավ հաշմանդամություն ունեցող անձանց իրական ներառման ճանապարհին:

Հայաստանը վավերացրեց Կոնվենցիան 2010թ. սեպտեմբերի 22-ին: Սակայն Կոնվենցիայի վավերացումն ինքնաբերաբար չի երաշխավորում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը և ներառումը, ինչպես նաև նրանց կյանքի որակի բարելավումը: Անհրաժեշտ է համապատասխանեցնել օրենսդրական դաշտը Կոնվենցիայի պահանջներին, մշակել տարբեր ոլորտներում հաշմանդամություն ունեցող անձանց ներառման իրավական և

գործնական մեխանիզմները, բարձրացնել որոշում կայացողների, քաղաքացիական հասարակության և հաշմանդամություն ունեցող անհատների իրազեկվածության աստիճանը:

Սույն հրապարակման նպատակն է՝ նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց, հաշմանդամության ոլորտին առնչվող պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և ընդհանուր բնակչության իրազեկվածության բարձրացմանը: Ուղեցույցում անդրադարձ է կատարվում հաշմանդամության տարբեր մոդելներին, ոլորտը կարգավորող իրավական ակտերին, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփման վարվելակերպի կանոններին և կիրառվող տերմինաբանությանը:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ

Երկարաժամկետ ֆիզիկական, հոգեկան, մտավոր և զգայական դժվարություններ ունեցող անձանց և միջավայրային արգելքների փոխազդեցության հետևանք, որը կարող է խոչընդոտել նրանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով հասարակական կյանքին լիարժեք ու արդյունավետ մասնակցությանը:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ

Անձինք, ովքեր ունեն երկարաժամկետ կամ կարճաժամկետ ֆիզիկական, հոգեկան, մտավոր կամ զգայական դժվարություններ, որոնք, տարբեր արգելքների հետ փոխազդեցության արդյունքում, կարող են արգելակել նրանց լիակատար և արդյունավետ մասնակցությունը հասարակության կյանքում՝ մյուսների հետ հավասար:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշմանդամության պատճառով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որի նպատակը կամ արդյունքն է սահմանափակել կամ նվազագույնի հասցնել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչումը, կիրառումը կամ դրանցից օգտվելը քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ ցանկացած այլ ոլորտում՝ մյուսների հետ հավասար հիմունքներով: Այն ընդգրկում է խտրականության բոլոր ձևերը՝ ներառյալ ողջամիտ հարմարեցումների տրամադրման մերժումը:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ

Հաշմանդամություն ունեցող անձանց իրական ներառումը կյանքի բոլոր ոլորտներում, նրանց իրավունքների իրացումը և խնդիրների արդյունավետ լուծումները մեծապես պայմանավորված են տվյալ հասարակությունում ընդունված հաշմանդամության մոդելով: Գոյություն ունեն հաշմանդամության մի շարք մոդելներ, որոնցից առավել տարածված և հայտնի են *բժշկական* և *սոցիալական* մոդելները:

Բժշկական մոդել

Ըստ բժշկական մոդելի, հաշմանդամությունը համարվում է անձի խնդիր, ինչը նշանակում է, որ հաշմանդամությունը «հիվանդություն» է, որի պատճառով անձի կենսագործունեությունը սահմանափակվում է: Հետևաբար, ջանքերն ուղղվում են անձի վիճակի բարելավմանը: Այսինքն եթե կենտրոնանանք միայն առողջական խնդիրների վրա և հաշմանդամություն ունեցող մարդուն դիտարկենք առաջին հերթին որպես հիվանդի, ապա նրա վիճակի բարելավմանն ուղղված գործողությունները կկրեն հիմնականում բժշկական և բարեգործական բնույթ (ֆիզիկական վերականգնում, բուժում, բարեգործական օգնություն):

Այս մոդելի վրա հիմնված մոտեցման արդյունքում հաշմանդամություն ունեցող մարդը զրկվում է իր կյանքի համար ինքնուրույն որոշումներ կայացնելու և իր սեփական ընտրությունը կատարելու հնարավորությունից՝ դառնալով «հիվանդ», «խնամյալ»: Նրա փոխարեն որոշում են կայացնում ուրիշները՝ խնամողը, ընտանիքը, հասարակությունը: Հասարակությունը սահմանափակում է նրա կրթության, մասնագիտության, աշխատանքի և այլ հնարավորությունները, քանի որ նա «հիվանդ» է և ունի հիմնականում բուժման, խնամքի և հոգածության կարիք: Հաշմանդամություն ունեցող մարդու կյանքը կախված է մնում ուրիշների կարծիքներից և եզրակացություններից, որն էլ հանգեցնում է նրա սոցիալական մեկուսացմանը՝ խոչընդոտելով նրա լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքին: Այսպիսով, բժշկական մոդելի տեսանկյունից հաշմանդամությունը դիտարկվում է որպես անձի խնդիր, և պետության քաղաքականությունն ու ջանքերն ուղղվում են անձի բուժմանը, վերականգնմանը, հատուկ խնամքին և աջակցությանը:

Սոցիալական մոդել

Չբացառելով հաշմանդամության բժշկական և այլ մոդելների (տե՛ս ստորև) կարևորությունը՝ սոցիալական մոդելը հաշմանդամությունը դիտարկում է որպես հասարակության սոցիալ-մշակութային արժեքների հետևանք: Այս մոտեցումը բացարձակապես կառուցված է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վրա և կոչ է անում ստեղծել հավասար հնարավորություններ և լիարժեք մասնակցություն հասարակության բոլոր անդամների համար: Հաշմանդամության սոցիալական մոդելը կենտրոնանում է արգելքների, խոչընդոտների վերացման վրա՝ վստահելով հաշմանդամություն ունեցող մարդու կարողություններին և ներուժին: Ավելին, այս մոդելը նպաստում է հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ մասնակցությանը երկրի

զարգացման գործընթացներին: Հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է առաջնային և կարևոր մասնակցություն ունենան իրենց խնդիրների լուծմանն ուղղված օրենքների, ռազմավարությունների և գործընթացների մշակմանը, իրականացմանը և գնահատմանը: Սոցիալական մոտեցման դեպքում հաշմանդամություն ունեցող մարդկանց կյանքի որակը բարելավելու գործողություններն ուղղված են այն բանին, որպեսզի վերացվեն բոլոր ներքին ու արտաքին խոչընդոտները, որոնք խանգարում են կյանքի տարբեր բնագավառներում նրանց ներգրավմանը: Սոցիալական մոդելի արդյունավետ կիրառումը կհանգեցնի հաշմանդամություն ունեցող մարդկանց հնարավորությունների հավասարեցմանը մյուս բոլոր մարդկանց հետ և նրանց համար ճանապարհ կբացի դեպի լիարժեք կյանք: Հետևաբար, հաշմանդամության խնդիրների լուծմանն ուղղված քաղաքականությունը պետք է հիմնականում կենտրոնանա միջավայրային ու այլ խոչընդոտների վերացման և հավասար հնարավորությունների ստեղծման վրա:

Սոցիալական մոդելի վրա հիմնված մոտեցումը խրախուսում է ներառականությունը, այսինքն հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների հավասար գնահատումը, դպրոցի ուսումնական և մշակութային, համայնքային միջոցառումներին ներգրավվածության աստիճանի բարձրացումը, կրթական և աշխատանքային զբաղվածության քաղաքականության վերանայումը, տարբեր գործընթացներում առկա խոչընդոտների վերացումը:

Մարդու իրավունքների մոդել

Մարդու իրավունքների (կամ քաղաքական-իրավական) մոդելն կիրառում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական շարժումների զգալի մասը: Այս մոդելը հաշմանդամություն ունեցող մարդկանց դիտում է որպես փոքրամասնություն, որի իրավունքներն ու ազատությունները ոտնահարվում են խտրականություն սերմանող օրենսդրությամբ, ճարտարապետական միջավայրի, տեղեկատվության և զանգվածային հաղորդակցման միջոցների անմատչելիությամբ, համապատասխան ենթակառուցվածքների բացակայությամբ, հասարակական կյանքի բոլոր ոլորտներին մասնակցելու սահմանափակ լինելով: Մարդու իրավունքների մոդելի բովանդակությունը բնորոշում է այդ հիմնախնդիրների լուծման հետևյալ մոտեցումը. հաշմանդամություն ունեցող անձի իրավունքները պետք է ամրագրված լինեն օրենսդրությամբ և իրագործվեն մարդու կենսագործունեության բոլոր ոլորտներում:

Բարեգործական մոդել

Մոդելը հաշմանդամություն ունեցող անձին դիտում է որպես «զոհ», որը գթության և աջակցության կարիք ունի: Բարեգործական և բժշկական մոդելները հաճախ կիրառվում են հաշմանդամություն չունեցող մարդկանց կողմից՝ հաշմանդամությունը սահմանելու համար: Քանի որ անձը համարվում է «զոհ», նա խնամքի և օգնության կարիք ունի, չի կարող ինքնուրույն ապրել: Բարեգործական մոդելը (որը կարելի է դիտարկել նաև որպես «ողբերգական-բարեգործական») կիրառվում է դրամահավաքների ժամանակ: Ընդունելով բարեգործության կարևորությունը, միևնույն ժամանակ, փորձագետներն անընդունելի և խտրական են համարում այս մոդելը, քանի որ այն ամրապնդում է հասարակության մեջ առկա կարծրատիպերը և առաջացնում խղճահարություն:

Կրոնական և բարոյական մոդել

Բարոյական մոդելը ամենահին, իսկ ներկայումս նաև ամենաքիչ տարածվածներից է: Ըստ այս մոդելի, հաշմանդամությունը ասոցացվում է մեղքի և ամոթի հետ: Դրա հետևանք կարող է լինեն հասարակությունից առանձնացումը, ինքնության հետ չհաշտվելը և այլն: Կրոնական մոդելը հաշմանդամությունը դիտում է արտաքին ուժի կողմից պատիժ, որը հաշմանդամություն ունեցող անձի կամ նրա ընտանիքի անդամների կողմից արված հանցանքի հետևանք է: Այս մոդելի հետևանքով մարդիկ կարող են հալածվել իրենց տարբեր լինելու պատճառով և նույնիսկ դատապարտվել մահվան: Կա նաև հակառակ պատկերացումը, համաձայն որի հաշմանդամությունը հրեշտակային երևույթ է: Բնականաբար, այն ևս չի նպաստում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և ներառմանը:

Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է հաշմանդամության սոցիալական մոդելի հիման վրա քաղաքականության կիրառումը: Այդ մոդելը՝ մարդու իրավունքների մոդելի հետ համակցությամբ, լավ հիմք է հաշմանդամություն ունեցող անձանց իրական ներառման համար: Սակայն ճիշտ մոդելի ընտրությունը համապատասխան պետական մարմինների կողմից բավարար պայման չէ նպատակին հասնելու համար: Անհրաժեշտ է փոխել որոշում կայացողների, ինչպես նաև հանրության ընկալումները, որոնք մինչ օրս հաճախակիորեն կամա թե ակամա հիմնված են բժշկական և այլ մոդելների վրա:

Չկա որևէ օրենք կամ այլ իրավական ակտ, որի ազդեցությունը հաշմանդամություն ունեցող անձանց վրա բացառված է: Ինչպես և ՀՀ այլ քաղաքացիները, հաշմանդամություն ունեցող մարդիկ իրենց կյանքի և գործունեության ընթացքում կարող են ներգրավված լինել ցանկացած ոլորտում, ուստի և յուրաքանչյուր ոլորտի իրավական կարգավորումները կարևոր են բնակչության բոլոր շերտերի համար:

Միևնույն ժամանակ, որոշ օրենքներ ունեն անմիջական առնչություն հաշմանդամության և հարակից ոլորտների հետ: Ստորև համառոտ անդրադարձ է կատարվում հենց այսպիսի օրենքներին և այլ իրավական ակտերին:

Հաշմանդամություն ունեցող անձանց առնչվող՝ Հայաստանի Հանրապետությունում գործող ամենաարդիական և ընդգրկուն, ինչպես նաև ամենաառաջադիմական իրավական կարգավորումները զետեղված են Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայում: Այն անդրադառնում է հաշմանդամություն ունեցող անձանց բոլոր հիմնական ոլորտներին՝ կրթություն, զբաղվածություն, մատչելիություն, անկախ կյանք և այլն:

Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2010թ. հոկտեմբերի 22-ին: Որպես մասնակից պետություն ՀՀ-ն, մասնավորապես, պարտավորվում է «ապահովել և օժանդակել հաշմանդամություն ունեցող անձանց՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լիակատար իրականացմանը՝ առանց հաշմանդամության պատճառով որևէ խտրականության» (հոդված 4): Միևնույն ժամանակ, Կոնվենցիան սահմանում է, որ «հատուկ միջոցառումները, որոնք անհրաժեշտ են հաշմանդամություն ունեցող անձանց փաստացի հավասարություն հաստատելու գործընթացն արագացնելու և դրան հասնելու համար, չեն համարվում խտրականություն՝ սույն Կոնվենցիայի պայմանների համաձայն» (հոդված 5):

Կոնվենցիան արձանագրում է, որ «հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները ենթարկվում են խտրականության բազմաթիվ ձևերի»: Այլ խոսքերով, նրանք կրկնակի կամ նույնիսկ բազմակի խտրականության են ենթարկվում և՛ որպես կանայք, և՛ որպես հաշմանդամություն ունեցող անձինք: Ուստի պետությունը պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները, որպեսզի ապահովի «կանանց լիակատար զարգացումը,

առաջխաղացումը և հնարավորությունների մեծացումը՝ նպատակ ունենալով երաշխավորել նրանց՝ սույն Կոնվենցիայում ամրագրված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացումն ու դրանցից օգտվելը» (հոդված 6):

Հոդված 7-ում ամրագրված են հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքները և շահերը: Մասնավորապես, «մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար հաշմանդամություն ուեցող երեխաների՝ մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից մյուս երեխաների հետ հավասար հիմունքներով օգտվելը»:

Մեր երկրում դեռ շատ անելիքներ կան Հոդված 9-ի (Մատչելիություն) և Հոդված 19-ի (Անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքը), ինչպես նաև Կոնվենցիայի այլ հոդվածների պահանջներն իրականացնելու ուղղությամբ:

Մասնակից պետությունները, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունը, պարտավոր են զեկույցներ ներկայացնել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեին Կոնվենցիայի իրականացմանն ուղղված՝ կատարված աշխատանքների մասին: Իր հերթին, Կոմիտեն զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ է մշակում, որոնք ուղեցույցի դեր են կատարում կառավարության հետագա գործունեության համար՝ դիտարկումներում մատնանշված թերությունների շտկման և, ընդհանուր առմամբ, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների առավել լիակատար պաշտպանության ուղղությամբ: Հատկանշական է, որ մինչև Կոմիտեի՝ եզրափակիչ դիտարկումներով հանդես գալը, ոչ միայն կառավարությունը, այլև տվյալ երկրի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները հնարավորություն են ստանում ներկայացնել Կոմիտեին իրենց դիրքորոշումները: Հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունները, համագործակցելով Կոմիտեի հետ, հնարավորություն ունեն ազդել կառավարության հետագա ծրագրերի և գործողությունների մշակման և, լայն առումով, երկրում հաշմանդամության ոլորտին առնչվող քաղաքականության վրա:

ՀՀ-ն դեռևս չի վավերացրել Կոնվենցիային կից՝ Կամընտիր արձանագրությունը: Դրա վավերացումը, ըստ ՀՀ կառավարությանը, մնում է պետական քաղաքականության օրակարգում և կիրականացվի առաջիկա տարիներին՝ պայմանների էական բարելավումից հետո: Կամընտիր արձանագրության վավերացումը կարևոր քայլ կլինի

պետության պատասխանատվության բարձրացման տեսանկյունից, քանի որ այն թույլ կտա հաշմանդամություն ունեցող անհատներին բողոքներ ներկայացնել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեին:

Ինչպես վերը նշվեց, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը չի սահմանափակվում ոլորտային իրավական ակտերով: Այսպես, կանանց իրավահավասարությունն ապահովելու և նրանց հանդեպ խտրականությունը բացառելու գործընթացում կարևոր դեր է խաղում ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան (1979թ., ՀՀ-ում գործում է 1993թ.-ից): Մասնավորապես, համաձայն հոդված 2-ի, պետությունը պարտավոր է «ընդունել կանանց նկատմամբ ամեն տեսակի խտրականությունն արգելող համապատասխան օրենսդրական և այլ միջոցներ, ներառյալ պատժամիջոցներ, որտեղ դրանք անհրաժեշտ են»: Հատկանշական է, որ այս կոնվենցիայում հաշմանդամությունը հիշատակվում է ընդամենը մեկ անգամ, այն էլ՝ սոցիալական ապահովության իրավունքի ապահովման կոնտեքստում (հոդված 11): Հայաստանը վավերացրել է նաև «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը: Սույն կոնվենցիայի գծով կոմիտեն 2016 թվականին Հայաստանի զեկույցի եզրափակիչ դիտարկումներում ներառել է առաջարկություններ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների նկատմամբ բռնության վերացմանը, նրանց սեռական և վերարտադրողական առողջության համար հավասար պայմանների ստեղծմանը և այլն:

Հարկ ենք համարում նաև համառոտ անդրադարձ կատարել «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիային (1989թ., ՀՀ-ում գործում է 1993թ.-ից): Այն առաջին կոնվենցիան է, որտեղ հաշմանդամություն ունեցող անձանց (տվյալ դեպքում՝ երեխաների) իրավունքները նշված են առանձնահատուկ կերպով: Մասնավորապես, համաձայն հոդված 1.1-ի, հաշմանդամություն ունեցող երեխան «պետք է ապրի լիարժեք և արժանավայել կյանքով այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են նրա արժանապատվությունը, նպաստում են ինքնավստահությանը և դյուրացնում են նրա ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքին»:

Բացի վերը նշված կոնվենցիաներից, ՀՀ քաղաքացիների (այդ թվում՝ հաշմանդամություն նունեցող անձանց) իրավունքների պաշտպանության արդյունավետ գործիք կարող են լինել նաև ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկումը, Մարդու իրավունքների և հիմնարար

ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, այլ միջազգային համաձայնագրերը և իրավական ակտերը, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը: Այդուհանդերձ, նպատակ չունենալով կատարել ոլորտին առնչվող միջազգային փաստաթղթերի լիակատար ուսումնասիրությունը՝ ստորև անդրադառնանք ազգային օրենսդրությանը:

ՀՀ Սահմանադրության մեջ հաշմանդամությունը հիշատակվում է երեք հոդվածներում: Դրանցից երկուսը առաջադիմական և արդիական ձևակերպումներ են պարունակում: Այսպես, համաձայն Հ*ոդված 14.1-ի՝*

Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև:

*Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, **հաշմանդամությունից** (ընդգծումը մերն է. հեղինակ), տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:*

Սոցիալական ապահովության իրավունքն ամրագրվում է Սահմանադրության հոդված 37-ով՝

*Յուրաքանչյուր ոք ունի ծերության, **հաշմանդամության** (ընդգծումը մերն է. հեղինակ), հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով:*

Դժբախտաբար, ՀՀ Սահմանադրությունը պարունակում է նաև հետևյալ տարօրինակ, եթե չասենք խտրական, ձևակերպումը՝

Հոդված 48. Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են՝

<...>

*7) իրականացնել հաշմանդամության կանխարգելման և **բուժման** (ընդգծումը մերն է. հեղինակ) ծրագրեր, խթանել հաշմանդամների մասնակցությունը հասարակական կյանքին:*

Այստեղ անընդունելի է հաշմանդամության «բուժման» մասին հիշատակումը, այն էլ՝ որպես պետության հիմնական խնդիր: Սահմանադրության քննարկման ընթացքում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները և հաշմանդամության փորձագետներից շատերն ակտիվորեն ընդդիմանում էին սույն ձևակերպմանը: Ցավոք, նրանց ձայնը լսելի չդարձավ որոշում կայացողների համար: Հաշվի առնելով երկրի ներկայիս քաղաքական

իրավիճակը և զարգացումները՝ հավանական է դառնում Սահմանադրության նոր խմբագրության կամ նույնիսկ նոր Սահմանադրության ընդունումը տեսանելի ապագայում: Այս դեպքում անհրաժեշտ է բացառել վերոնշյալ կամ նման սխալ ձևակերպումները դեռևս Սահմանադրության նախագծման և նախնական քննարկումների փուլում:

Մեր երկրում հաշմանդամության ոլորտը կարգավորող մայր օրենքն է «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը: Այն ընդունվել էր դեռևս 1993թ.-ին, ժամանակի ընթացքում բազմաթիվ անգամներ ենթարկվել է փոփոխությունների (ինչպես դրական, այնպես էլ՝ բացասական) և, բնականաբար, չի կարող արտացոլել ժամանակակից իրողությունները և արդյունավետ գործիք լինել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության համար: Հաշվի առնելով դա, ինչպես նաև այն հանգամանքը, որ մշակման փուլում է գտնվում նոր՝ Կոնվենցիայի պահանջներին համապատասխանող, օրենքի նախագիծը, նպատակահարմար չենք գտնում մանրամասնորեն անդրադառնալ գործող մայր օրենքի կարգավորումներին:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման, պաշտպանության եվ նրանց սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծն անցել է քննարկումների, անվանման և բովանդակության փոփոխությունների երկար ճանապարհ, սակայն այն դեռևս չի ստացել իր վերջնական տեսքը և, հետևաբար, չի ընդունվել որպես օրենք ՀՀ ԱԺ-ի կողմից:

Սույն ուղեցույցի կիրառելիության և օգտակարության աստիճանի բարձրացման նպատակով, ստորև կետեղում ենք հակիրճ տեղեկատվություն որոշ արդիական և կարևոր իրավական կարգավորումների մասին:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԽՈՒՄԲ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին օրենքի 6[2]-րդ հոդվածի համաձայն, բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինն անձին հաշմանդամ է ճանաչում սույն օրենքի պահանջներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող

դասակարգիչներին և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշներին համապատասխան՝ ելնելով բժշկասոցիալական փորձաքննության արդյունքներից:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԽՈՒՄԲ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ (ԿԱՄ ՉՍԱՀՄԱՆԵԼՈՒ) ՄԱՍԻՆ ԲՍՓՀ-Ի ՈՐՈՇՄԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Համաձայն ՀՀ կառավարության Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին 02.03.2006 թվականի N276-Ն որոշման՝

Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

Անձը կարող է հանձնաժողովի ընդունած փորձաքննական որոշումն օրենքով սահմանված ժամկետում բողոքարկել գործակալության պետին, որի հանձնարարությամբ անձը վերափորձաքննվում է վերափորձաքննության բաժնի կողմից: Վերափորձաքննության արդյունքում համապատասխան ստորաբաժանումն ընդունում է որոշում:

Գործակալության վերափորձաքննության բաժնի կողմից ընդունված որոշման հետ համաձայն չլինելու դեպքում անձը մեկամսյա ժամկետում կարող է այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՀԱՆՐԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի 10 հոդվածի՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը քաղաքաշինության բնագավառում ապահովում է հաշմանդամների համար բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, տրանսպորտային ենթակառուցվածքների օբյեկտներից անարգել օգտվելու՝ օրենքից բխող պահանջների իրականացումը:

Համաձայն նույն օրենքի 22.1 հոդվածի՝

Ճարտարապետահատակագծային առաջադրանքում նշվում են Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված և օբյեկտի նախագծմանն առնչվող քաղաքաշինական, պատմության և մշակույթի հուշարձանների ու շրջակա միջավայրի պահպանության, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային, քաղաքացիական

պաշտպանության, հաշմանդամների ու բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության և այլ նորմատիվ ակտերով սահմանված պահանջները:

Գործում են նաև «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերը, որոնք ուժի մեջ են մտել դեռևս 2007թ.-ին:

Վերոնշյալից բխում է, որ նորակառույց հանրային շինությունները պետք է լիովին համապատասխանեն մատչելիության նորմերին: Սակայն հարկ է նշել, որ գործնականում այս իրավական ակտերի կիրառումը գտնվում է ցածր մակարդակի վրա:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՅԻ՝ ՀԱՏՈՒԿ ԿԱՄ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ (ՆԵՐԱՌԱԿԱՆ) ԴՊՐՈՑՈՒՄ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Համաձայն Կրթության մասին ՀՀ օրենքի 19 հոդվածի՝

Պետությունն ստեղծում է հատուկ հաստատություններ (այդ թվում՝ երկարօրյա և գիշերօթիկ)՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպելու նպատակով: Հատուկ հաստատությունների տիպերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ծնողների ընտրությամբ կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ հաստատություններում՝ հատուկ ծրագրերով:

Վարքի շեղում ունեցող անչափահասների ուսուցումը և վերադաստիարակումն իրականացնում են հանրակրթական դպրոցները՝ հաշվի առնելով սովորողների հոգեբանական առանձնահատկությունները:

Համաձայն Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 4.2.1 հոդվածի՝

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած գործողությունների պլանի և ժամանակացույցի՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգը:

Մինչև 2022 թվականի օգոստոսի 1-ը յուրաքանչյուր մարզում գործող առնվազն մեկ, Երևան քաղաքում՝ առնվազն չորս հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն վերակազմակերպվելու է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի: Եթե տվյալ մարզում առկա չէ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն, ապա մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կարող է վերակազմակերպվել կամ պատվիրակվել այնպիսի կազմակերպության, որում առկա են ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմաններ: Բացի այդ, պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում կներդրվեն ուսուցչի օգնականի հաստիքներ, որոնց թիվը որոշվելու է տվյալ դպրոցում սովորողների միջին տարեկան թվի 10 տոկոսի հաշվարկի հարաբերակցությունից՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված կարգի համաձայն:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համաձայն «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14 հոդվածի՝

Հաշմանդամների միջնակարգ, միջնակարգ-մասնագիտական և բարձրագույն կրթությունն իրականացվում է ընդհանուր տիպի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հատուկ ուսումնական հաստատություններում:

Ընդունելության քննությունների ընթացքում հաշմանդամների և մյուս դիմորդների համար հավասար պայմաններ ստեղծելու նպատակով իրականացվում են համապատասխան միջոցառումներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած հաշմանդամները այլ հավասար պայմանների դեպքում օգտվում են պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն կամ

միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվելու առաջնահերթ իրավունքից:

Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներն և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք ընդունվում են պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համաձայն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ Ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ սահմանվում է՝ հաշմանդամի պահանջով՝ բժշկական եզրակացության հիման վրա:

Օրենսգրքի 144-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ Հաշմանդամները կարող են ներգրավվել արտաժամյա աշխատանքի, եթե բժշկական եզրակացությամբ դա նրանց արգելված չէ:

Իսկ «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ պարբերությունների համաձայն՝

1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների համար սահմանվում է աշխատաժամերի կրճատված տևողություն՝ շաբաթական 36 ժամից ոչ ավելի:

Հաշմանդամների պահանջով և վերականգման անհատական ծրագրերին համապատասխան գործատուն պարտավոր է նրանց համար սահմանել ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ: Նման դեպքերում հաշմանդամների աշխատանքի վարձատրությունը կատարվում է՝ ելնելով փաստացի աշխատած աշխատաժամանակից կամ թողարկված արտադրանքի քանակից:

Աշխատանքի ընդունելիս հաշմանդամների համար փորձաշրջան չի սահմանվում: Աշխատողների թվի կամ հաստիքների կրճատման ժամանակ աշխատանքի հավասար արտադրողականության և նույն որակավորման դեպքում հաշմանդամներն օգտվում են աշխատանքում մնալու առավելությունից:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԻՐԵՆՑ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՆԵՐԱՌՈՂ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համաձայն «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին պարբերության՝

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հաշմանդամի աշխատանքային զբաղվածության երաշխիքներն ապահովվում են՝

ա) հաշմանդամների աշխատուժն օգտագործող կազմակերպությունների, հիմնարկների, ինչպես նաև հաշմանդամների հասարակական կազմակերպությունների նկատմամբ արտոնյալ ֆինանսատնտեսական քաղաքականության իրականացմամբ.

բ) կազմակերպություններում հաշմանդամներին աշխատանքի ընդունելու համար քվոտաների և հաշմանդամների համար՝ օրենսդրությամբ սահմանված միջոցառումների իրականացմամբ.

գ) հաշմանդամներին առավել համապատասխանող մասնագիտություններով աշխատանքային տեղերի վերապահմամբ.

դ) հաշմանդամների համար լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման խրախուսմամբ.

ե) հաշմանդամին աշխատանքի տեղավորելու դեպքում գործատուին հաշմանդամին վճարվող աշխատավարձի մասնակի փոխհատուցմամբ:

Համաձայն «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 12-րդ կետի 5-րդ ենթակետի՝ Զբաղվածության պետական կարգավորման ոլորտում գործատուներն իրավունք ունեն աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորելիս պետական աջակցության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համաձայն «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին պարբերության՝

Պետական իշխանության և կառավարման տեղական մարմինները հաշմանդամների ձեռնարկատիրական գործունեության (այդ թվում՝ տնային պայմաններում) կազմակերպման համար ստեղծում են անհրաժեշտ պայմաններ՝ այդ նպատակներով ոչ բնակելի

տարածությունների արտահերթ տրամադրման, ինչպես նաև հումքի ձեռքբերման և արտադրանքի իրացման գործում օժանդակություն ցույց տալու միջոցով:

Որոշակի արտոնություններ սահմանում է «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը և մի շարք այլ իրավական ակտեր:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՍՆԶՍՆՑ ԹՈՇԱԿՆԵՐԸ

Համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի՝

Սույն օրենքով սահմանվում են կենսաթոշակի հետևյալ տեսակները.

1. աշխատանքային՝

1) տարիքային,
2) արտոնյալ պայմաններով,
3) երկարամյա ծառայության,
4) հաշմանդամության,
5) կերակրողին կորցնելու դեպքում,
6) մասնակի.

2. զինվորական՝

1) երկարամյա ծառայության,
2) հաշմանդամության,
3) կերակրողին կորցնելու դեպքում.

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՍՆԶՍՆՑ՝ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏ ՍՏԱՆԱԼՈՒ ԽՆԴՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Համաձայն 09.12.1997թ. N 562 ՀՀ Կառավարության «Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան նպաստի նշանակման և վճարման կարգի մասին» որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի՝

Նպաստ ստանալու իրավունք ունեն ընտանիքի կարիքավորության աստիճանի գնահատման «Փարոս» համակարգում հաշվառված այն ընտանիքները, որոնց կարիքավորության աստիճանը գնահատող միավորը բարձր է կարիքավորության սահմանային մեծության միավորից:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՍՆԶԻՆ ԽՆԱՄՈՂ ԱՆՁԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 38 հոդվածի՝ Խնամակալության և հոգաբարձության պարտականությունները կատարվում են անհատույց:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՍՆԶԻՆ ԽՆԱՄՈՂ ԱՆՁԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՍՏԱԺԻ ԽՆԴՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ՝ սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժի, իսկ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելիս սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային ստաժում հաշվառվում են նաև՝ ... 2) ծնողներից (որդեգրողներից, խնամակալներից) մեկի՝ հաշմանդամ երեխային մինչև նրա 18 տարին լրանալը կամ խնամակալ ճանաչված անձի՝ առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակահատվածը՝ տասը տարուց ոչ ավելի:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՍՆԶԱՆՑ ԱՆՎՃԱՐ ԲՈՒԺՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՀՀ կառավարության 04.03.2004թ. թիվ 318-Ն որոշման 1-ին

հավելվածով սահմանված է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող՝ բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկը, որի մեջ ներառված են նաև հաշմանդամություն ունեցող անձինք:

Պետությունը չունի պարտավորություն՝ հոգալու հաշմանդամություն ունեցող անձանց արտերկրում բուժման ծախսերը, ներառյալ այն դեպքերում, երբ Հայաստանում տվյալ հիվանդության բուժումը հնարավոր չէ:

Հաշմանդամություն ունեցող անձանց անվճար դեղորայք ստանալու իրավունքը

ՀՀ կառավարության 23 նոյեմբերի 2006 թվականի N 1717-Ն որոշմամբ սահմանված է անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի և հիվանդությունների ցանկերը, համաձայն որոնց՝

1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները և հաշմանդամ երեխաները (մինչև 18 տարեկան) դեղերը ստանում են անվճար, իսկ 3-րդ խմբի հաշմանդամներին դեղերը տրվում են 50 տոկոս զեղչով:

Հարկ է նշել, որ անվճար կամ արտոնյալ պայմաններով տրվում են ոչ բոլոր դեղերը:

Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերին և հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդներին դեղերով ապահովումն իրականացվում է դեղերի ձեռքբերման բոլոր աղբյուրների հաշվին ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների, մասնագիտացված հիվանդանոցների ու դիսպանսերների միջոցով:

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Ըստ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն «Վերականգնողական օգնության տրամադրման կարգը և պայմանները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 22-ի N 1369-Ն և 2007 թվականի ապրիլի 12-ի N 453-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշմամբ սահմանված «Վերականգնողական օգնության տրամադրման կարգը և պայմանները» N 1 հավելվածի 3-րդ գլխի 2-բաժնի՝

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՕԺԱՆԴԱԿ ՍԱՐՔԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

Վերականգնողական, տեխնիկական միջոցները և այլ օժանդակ սարքերը, այդ թվում՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաները (այսուհետ նաև՝ պարագաներ կամ պարագա) նախատեսված են անձի կենսագործունեության սահմանափակումների լրիվ կամ մասնակի հաղթահարման, փոխհատուցման (փոխարինման) համար:

Սույն կարգով նախատեսված դեպքերում և կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին պարագաները տրամադրվում են՝

1) հաշմանդամություն ունեցող անձանց.

2) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված՝ ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքի անդամներին (այսուհետ նաև՝ սոցիալապես անապահով անձինք).

3) Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին և նրանց հավասարեցված անձանց.

4) Հայրենական մեծ պատերազմում զոհվածների այրիներին.

5) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների (այդ թվում՝ պարտադիր զինվորական ծառայության զինծառայողների) ընտանիքի անդամներին.

6) երեխաներին՝ անկախ հաշմանդամություն ունենալու կամ սոցիալապես անապահով լինելու հանգամանքից:

Պարագաները տրամադրում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված կազմակերպությունները՝ լիազորած մարմնի հետ կնքված պայմանագրի հիման վրա, ինչպես նաև պարագաների ստացման, պահպանման և բաշխման աշխատանքներն իրականացնող՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպությունները (այսուհետ՝ կազմակերպություն):

Պարագաները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված՝ վերականգնողական, տեխնիկական միջոցների և այլ օժանդակ սարքերի օգտագործման ժամկետներին համապատասխան:

Վերին և ստորին վերջույթների պրոթեզները, օրթեզները, ձայնաստեղծ սարքերը, աչքի պրոթեզները, սայլակները և քայլակները տրամադրվում են միայն հաշմանդամություն ունեցող անձանց՝ բացառությամբ սույն կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված դեպքերի:

Սույն կարգի 12-րդ կետում չնշված այլ անձանց կարող են պարագաներ տրամադրվել լիազորած մարմնի ղեկավարի կողմից սահմանված դեպքերում և կարգով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի տվյալ նպատակային ծրագրով նախատեսված գումարի առավելագույնը մեկ տոկոսի սահմաններում:

Երեխաներին օրթեզներ և սեղմիրաններ (կորսետներ) կարող են տրամադրվել նաև առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած լիազորած մարմնի ղեկավարի կողմից սահմանված դեպքերում և կարգով:

Հաշմանդամություն ունեցող անձանց պարագաները (բացառությամբ ձեռնափայտի, կրծքագեղձի պրոթեզի, տակդիրի) առաջին անգամ, ինչպես նաև սույն կարգի 20-րդ կետում սահմանված դեպքում տրամադրվում են հաշմանդամություն ունեցող անձի ՎԱԾ-ի համաձայն՝ ՎԱԾ-ի բժշկական վերականգնման ծրագրում պարագաներով ապահովում նախատեսող միջոցառումների շրջանակներում:

Կրծքագեղձի պրոթեզ տրամադրվում է ինչպես հաշմանդամություն ունեցող կանանց, այնպես էլ սոցիալապես անապահով կանանց:

Հաշմանդամի սայլակ տրամադրվում է առաջին խմբի հաշմանդամություն ունեցող անձանց և «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող երեխաներին՝ հաշմանդամություն ունեցող անձի ՎԱԾ-ի համաձայն՝ ՎԱԾ-ի բժշկական վերականգնման ծրագրում պարագաներով ապահովում նախատեսող միջոցառումների շրջանակներում:

Հաշմանդամություն ունեցող անձանց վերին և ստորին վերջույթների առաջին անգամ պրոթեզավորումը և օրթեզավորումը, հաշմանդամություն ունեցող անձանց Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված ժամկետից շուտ պարագաների տրամադրումը, սույն կարգի 35-րդ կետում նշված դեպքում՝ պարագաների վերանորոգումը, ինչպես նաև պարագաների հերթական տրամադրման հետ կապված վիճահարույց դեպքերում պարագաների տրամադրումն իրականացվում է սույն կարգի 43-րդ կետում նշված բուժատեխնիկական հանձնաժողովի (այսուհետ՝ բուժատեխնիկական հանձնաժողով) գրավոր եզրակացության հիման վրա:

Լսողական սարքերը տրամադրվում են լսողության խնդիրներ ունեցող՝ 12-18 տարեկան երեխաներին, հաշմանդամություն ունեցող անձանց, տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձանց:

Լսողական սարքերը և հաշմանդամի սայլակները տրամադրվում են պետական հավաստագրերի հիման վրա: Պետական հավաստագրերի տրամադրման, դրանց գնային արժեքի որոշման կարգը և պետական հավաստագրի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Պետական հավաստագրի հիման վրա լսողական սարքեր տրամադրվում են մրցութային կարգով ընտրված այն

կազմակերպությունների կողմից, որոնք լիազորած մարմնի հետ կնքել են պետական հավաստագրի հիման վրա եվրոպական երկրների արտադրության լսողական սարքեր տրամադրելու մասին համապատասխան պայմանագրեր: Մրցույթի անցկացման կարգը և պայմանները սահմանում է լիազորած մարմնի ղեկավարը:

Առաջին անգամ ստորին վերջույթի պրոթեզավորման դեպքում, մինչև հիմնական պրոթեզի պատրաստումը, հաշմանդամություն ունեցող անձի համար պատրաստվում և նրան տրամադրվում է բուժամարզական պրոթեզ: Բուժամարզական պրոթեզը փոխարինվում է հիմնական պրոթեզով, երբ անդամահատված ծայրատի անատոմիական փոփոխությամբ պայմանավորված այն հնարավոր չէ օգտագործել:

Վերին վերջույթի պրոթեզի կարիք ունեցող հաշմանդամություն ունեցող անձին, չորս տարվա ընթացքում, տրամադրվում են մեկ կոսմետիկ պրոթեզ և մեկ շարժողական պրոթեզ (ձգողական կամ միոպրոթեզ):

Վերին կամ ստորին վերջույթի պրոթեզ կրող հաշմանդամություն ունեցող անձին, անկախ նոր պրոթեզ տրամադրելու ժամկետից, յուրաքանչյուր տարի տրամադրվում է ծայրատի երեք ձեռնոց կամ գուլպա:

Հաշմանդամություն ունեցող և սոցիալապես անապահով անձանց յուրաքանչյուր տարի տրամադրվում է երկու զույգ օրթոպեդիկ կոշիկ՝ մեկ զույգն առանց տաքացված տակդիրների, իսկ մյուս զույգը՝ կիսաճիտք կամ երկարաճիտք: Ելնելով հաշմանդամություն ունեցող անձի հատուկ կարիքներից և հիվանդության առանձնահատկություններից՝ տարեկան կարող է տրամադրվել միայն երկու զույգ կիսաճիտք օրթոպեդիկ կոշիկ: Օրթոպեդիկ կոշիկներն անձին կարող են տրամադրվել երկու զույգը միաժամանակ:

Ստորին վերջույթը պրոթեզավորված անձանց յուրաքանչյուր տարի տրամադրվում է երկու զույգ պրոթեզի կոշիկ, մեկ զույգն առանց տաքացված տակդիրների, իսկ մյուս զույգը՝ կիսաճիտք կամ երկարաճիտք: Պրոթեզի կոշիկներն անձին կարող են տրամադրվել երկու զույգը միաժամանակ:

Վերին երկու վերջույթների ծայրատներով, ինչպես նաև մեկ ձեռքի ծայրատով, մյուս ձեռքի դաստակի ձևախեղումով հաշմանդամություն ունեցող անձանց անվճար տրվում է կողային ռետինե ժապավեններով կոշիկ:

Ստորին վերջույթների ազդրային հատվածների երկկողմանի անդամահատումից հետո, սայլակ ստացած հաշմանդամություն ունեցող անձին, անհրաժեշտության դեպքում տրամադրվում է նաև փոքր տրամաչափի սայլակ:

	Անվանումը	Օգտագործման ժամկետը
1.	Պրոթեզներ	
1)	ստորին վերջույթների պրոթեզներ	մեծահասակներին՝ երեք տարի
		երեխաներին՝ մեկ տարի
2)	վերին վերջույթների պրոթեզներ	մեծահասակներին՝ չորս տարի
		երեխաներին՝ երկու տարի
3)	Օրթոպրոթեզներ	մեծահասակներին՝ երկու տարի
		երեխաներին՝ 1 տարի
2.	Օրթեզներ	մեծահասակներին՝ մեկ տարի
		երեխաներին՝ վեց ամիս
3.	Ստորին վերջույթների ապարատներ	մեծահասակներին՝ երկու տարի
		երեխաներին՝ 1 տարի
4.	Սեղմիրաններ	մեծահասակներին՝ 2 տարի
		երեխաներին՝ վեց ամիս
5.	Աղեկապեր (ծնկակալ, ռեկլինատոր)	մեկ տարի
6.	Կոշիկներ	
1)	պրոթեզի (տարեկան՝ երկու զույգ)	մեկ տարի
2)	օրթոպեդիկ (տարեկան՝ երկու զույգ)	մեկ տարի
7.	Վերականգնման տեխնիկական միջոցներ	
1)	ձեռնափայտեր՝ մեկ լրացուցիչ ռետինով	երկու տարի
2)	հենակներ՝ մեկ լրացուցիչ ռետինով	երկու տարի
3)	սուպինատոր/տակդիր	մեծահասակներին՝ մեկ տարի, երեխաներին՝ վեց ամիս
4)	կրծքագեղձի պրոթեզ	մեկ տարի
5)	Լսողական սարք	12-18 տարեկան երեխաներին և 18-ից մինչև 29 տարեկան՝ հաշմանդամություն ունեցող անձանց՝ 5 տարի
		30 տարեկան և ավելի բարձր տարիքի՝ հաշմանդամություն ունեցող, տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձանց՝ 3 տարի
6)	հաշմանդամի սայլակ (հավաստագիր)	երեք տարի
7)	փոքր տրամաչափի սայլակ	երկու տարի
8)	Քայլակներ	մեծահասակներին՝ երեք տարի երեխաներին՝ երկու տարի
8.	Աչքի պրոթեզ	մեծահասակներին՝ երկու տարի, երեխաներին՝ մեկ տարի
9.	Ձայնաստեղծ սարք	հինգ տարի

Ելնելով անձի առողջական վիճակից, տարիքից և ծայրատի ձևից, ՎԱԾ-ի հիման վրա, անձը կարող է ստանալ՝

1) մեկ կամ երկու արմնկային հենակ կամ,2) մեկ կամ երկու թևատակի հենակ կամ,

3) մեկ ձեռնափայտ և երկու թևատակի հենակ կամ,

4) մեկ ձեռնափայտ և երկու արմնկային հենակ:

Պարագաները կազմակերպության կողմից հաշմանդամություն ունեցող անձին տրամադրվում են անհատական հարմարեցումից և դրա օգտագործման ձևը սովորեցնելուց հետո:

Հաշմանդամություն ունեցող անձի առողջական վիճակից ելնելով՝ հաշմանդամի սայլակը, առանց գրավոր լիազորագրի առկայության, կարող է ստանալ նաև նրա ներկայացուցիչը չհանդիսացող որևէ այլ անձ, ով սայլակն ստանալու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի հետ պետք է ներկայացնի նաև իր անձը հաստատող փաստաթուղթը:

Տրամադրված պարագաների վերանորոգումն իրականացնում է կազմակերպությունը (բացառությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպությունների): Պարագաների երաշխիքային ժամկետում վերանորոգումը կատարվում է կազմակերպության միջոցների հաշվին, իսկ երաշխիքային ժամկետի լրանալուց հետո Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին: Երաշխիքային ժամկետի լրանալուց հետո կազմակերպության կողմից պարագաների վերանորոգումը կատարվում է պարագաների օգտագործման ամբողջ ժամանակահատվածում, սակայն ոչ ավելի, քան յուրաքանչյուր տարին մեկ անգամ, իսկ ստորին վերջույթների կաշվե և մոդուլյար պրոթեզների, ստորին վերջույթի ապարատների վերանորոգումը՝ ոչ ավելի, քան յուրաքանչյուր տարին երկու անգամ, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է բուժատեխնիկական հանձնաժողովի եզրակացությունը սահմանված ժամկետից շուտ պարագաների վերանորոգման մասին: Մնացած այլ դեպքերում պարագաների վերանորոգումն իրականացվում է կազմակերպության մասնագետի եզրակացության հիման վրա: Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպությունների կողմից տրամադրվող պարագաների վերանորոգումն իրականացվում է երաշխիքային ժամկետում՝ մատակարար կազմակերպության կողմից, իսկ երաշխիքային ժամկետի լրանալուց հետո՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված կազմակերպության կողմից՝ լիազորած մարմնի հետ կնքված պայմանագրի հիման վրա:

Ըստ նույն որոշմամբ սահմանված՝ «Վերականգնողական, տեխնիկական միջոցների և այլ օժանդակ սարքերի օգտագործման ժամկետները» N 2 հավելվածի՝

ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1194 հոդվածի՝

Պարտադիր բաժին է համարվում ժառանգի իրավունքը, անկախ կտակի բովանդակությունից, ժառանգելու այն բաժնի առնվազն կեսը, որը նրան կհասներ ըստ օրենքի ժառանգելու դեպքում:

Ժառանգության բացման ժամանակ պարտադիր բաժնի իրավունք ունեն ժառանգատուի անչափահաս երեխաները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով հաշմանդամ կամ անգործունակ ճանաչված կամ 60 տարեկան դարձած ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները:

Պարտադիր բաժնի չափը որոշելիս հաշվի է առնվում այն ամենը, ինչ նման բաժնի իրավունք ունեցող ժառանգը որևէ հիմքով ստանում է ժառանգությունից՝ ներառյալ նման ժառանգի օգտին սահմանված կտակային հանձնարարության արժեքը:

Իսկ համաձայն նույն օրեմսգրքի 1220 հոդվածի՝

Ըստ օրենքի ժառանգների թվին են պատկանում այն անաշխատունակ անձինք, ովքեր մինչև ժառանգատուի մահն առնվազն մեկ տարի գտնվել են նրա խնամքի ներքո: Ըստ օրենքի այլ ժառանգների առկայության դեպքում նրանք ժառանգում են այն հերթի ժառանգների հետ միասին, որը ժառանգության է հրավիրվում:

ՆՈՏԱՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՏԵՂԱՇԱՐԺՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆԿՈՂՆԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Համաձայն «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի՝

Եթե շահագրգիռ անձի՝ տեղաշարժի հնարավորությունը սահմանափակող հիվանդության կամ անօգնական վիճակի պատճառով նոտարական գրասենյակում նոտարական գործողությունների կատարումն անհնարին է դառնում, ապա շահագրգիռ անձի դիմումի

հիման վրա նոտարը պարտավոր է դիմումը ներկայացնելու օրը կամ դրան հաջորդող աշխատանքային օրը նոտարական գործողություններ կատարել նոտարական գրասենյակից դուրս՝ նոտարական տարածքում:

Իսկ համաձայն 26.05.2011 թվականի N 733-Ն ՀՀ կառավարության «Նոտարի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների սակագները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 25-ի N 919-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման 2-րդ մասի 3-րդ կետի, սահմանվել է, որ նոտարի կողմից իր գրասենյակից դուրս նոտարական գործողություններ կատարելու դեպքում կարող է գանձվել լրացուցիչ վճար՝ ոչ ավելի, քան նվազագույն աշխատավարձի 10-ապատիկի չափով (տվյալ դեպքում, որպես նվազագույն աշխատավարձի չափ հաշվվում է 1000 դրամ):

Ըստ նույն որոշման 2-րդ մասի 7-րդ կետի, սահմանվել է, որ որոշման հավելվածի 19-րդ, 20-րդ, 20.1-ին, 26-րդ, 26.2-րդ, 37-րդ և 39-րդ կետերով նախատեսված՝ նոտարի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների սակագները հաշվարկվում են համապատասխան կետերով նախատեսված սակագների նվազագույն չափերով՝ անկախ նոտարական տվյալ գործողության կամ ծառայության բարդության կամ աշխատատարության՝

ա. սոցիալապես անապահով ընտանիքների (անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության «20.00» միավորից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքների) անդամների համար,

բ. 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց համար,

գ. կենսաթոշակառուների համար,

դ. Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցների համար:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ՝ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համաձայն ՀՀ կառավարության 08.07.1997 թվականի N 251 ««Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» և «Բռնադատվածների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ

կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու միջոցառումների և առանձին խմբերի քաղաքացիների արտոնությունների մասին» որոշմամբ հաստատված N 1 «Հայաստանի Հանրապետությունում քաղաքային, մերձքաղաքային և միջքաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներով՝ անկախ սեփականության ձևից (բացի տաքսուց), առանձին խմբերի քաղաքացիների երթևեկության արտոնությունների» ցանկի 10-րդ կետի՝

Սահմանվել է առանձին խմբերի քաղաքացիների՝ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց և բռնադատվածների, համար ներքաղաքային ուղևորատար տրանսպորտով անվճար (երթևեկության վկայականով), բացի ավտոբուսից, արտոնություն:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՆՔՈՒՄ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆՇՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

ՀՀ Կառավարության 2003 թվականի թիվ 780-Ն որոշմամբ սահմանված են հաշմանդամության խումբ նշանակելու չափորոշիչները, որի համար հիմք են հանդիսանում անձի կենսագործունեության սահմանափակումները, որի մեջ է մտնում նաև աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողությունը: Հիմնականում աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության սահմանափակման աստիճանը համընկնում է ինքնասպասարկման ապահովման և ինքնուրույն տեղաշարժվելու կարողությունների սահմանափակման աստիճանների հետ, հետևաբար դա է պատճառը, որ հաշմանդամության խմբի հետ նշվում է նաև անձի անաշխատունակության կամ մասնակի անաշխատունակության մասին:

Հարկ է նշել, որ Հայաստանում օրենսդրական դաշտը, ներառյալ վերևում թվարկված իրավական ակտերը, դեռևս խտրական են և պարունակում են շատ բացեր: Հայաստանում ներառական իրավական բարեփոխումներ իրականացնելը հրամայական է, ուստի ակնկալում ենք պետական մարմինների, քաղաքացիական հասարակության, իրավաբանների և հաշմադամություն ունեցող անձանց ակտիվ ներգրավածություն և համագործակցություն այս գործում:

ԻՆՉՊԵ՞Ս ՍՏԱՆԱԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Կարելի է դիմել Մարդու իրավունքների պաշտպանին, երբ իրավունքը կամ ազատությունը խախտել է.

- պետական մարմինը, տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոնատար անձը,
- հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունը կամ դրա ներկայացուցիչը,
- պետության կողմից պատվիրակված լիազորություն իրականացնող կազմակերպությունը կամ դրա պաշտոնատար անձը:

Ովքե՞ր կարող են դիմել Մարդու իրավունքների պաշտպանին.

- անձն անձամբ,
- նրա ներկայացուցիչը, իրավահաջորդը, ժառանգը, խնամակալության և հոգաբարձության մարմինները՝ երեխաների, անգործունակ և սահմանափակ գործունակ անձանց, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց և զինծառայողների մերձավոր ազգականները:

Կարևոր է իմանալ՝

Մարդու իրավունքների պաշտպանին կարող է դիմել նաև հասարակական կազմակերպությունը, եթե կա անձի գրավոր համաձայնությունը:

Ինչպե՞ս դիմել Մարդու իրավունքների պաշտպանին.

Գրավոր՝

- փոստով կամ Պաշտպանի աշխատակազմ անձամբ հանձնելով (ք. Երևան, Պուշկինի 56ա),
- էլեկտրոնային փոստով (ombuds@ombuds.am),
- Պաշտպանին կամ աշխատակազմի իրավասու ներկայացուցչին դիմումն առձեռն հանձնելով:

Բանավոր՝

- Պաշտպանի աշխատակազմի իրավասու ներկայացուցչին անձամբ հայտնելով,
- աշխատակազմ զանգահարելով (+374 10 53 76 51),
- 116 թեժ գծին ահազանգ ներկայացնելով:

Կարևոր է իմանալ՝

Դիմումը պետք է լինի ստորագրված և ներառի դիմողի՝

- անունը, ազգանունը,
- հասցեն,
- հետադարձ կապի վերաբերյալ տվյալները (հեռախոսահամար, էլ. հասցե և այլն)

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

ՀՀ, 0002, Երեւան, Պուշկին 56ա
+374 10 53 76 51
ombuds@ombuds.am
+374 96116100

ՄԱՐԶԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Շիրակի մարզ, ք. Գյումրի
Միհեր Մկրտչյան 44/46
+374312 41981
shirak@ombuds.am

Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ
Կենտրոնական հրապարակ 4
+37426430116
gavar@ombuds.am

Սյունիքի մարզ, ք. Կապան
Մելիք Ստեփանյան 6
+37428520116
kapan@ombuds.am

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆՉՎՈՂ ՃԻՇՏ ԵՑ ՍԽԱԼ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Փոխհարաբերությունները սկսվում են վերաբերմունքից, իսկ վերաբերմունքը հաճախ ձևավորվում է կիրառվող տերմինաբանության ազդեցության տակ:

Երբ խոսում կամ գրում եք հաշմանդամություն ունեցող անձանց մասին, ընտրեք արժանապատվություն և հարգանք արտահայտող բառերն ու արտահայտությունները: Կիրառեք այնպիսի տերմիններ, որոնք նկարագրում են անձի հաշմանդամությունը՝ խուսափելով անձի և նրա հաշմանդամության նույնացումից:

Օգտագործեք բառեր և հասկացություններ, որոնք չեն ստեղծում կարծրատիպեր	**Խուսափեք կարծրատիպեր ստեղծող բառերից և հասկացություններից**
Հաշմանդամություն ունեցող մարդ/անձ	Հիվանդ, անլիարժեք, արատավոր, սահմանափակ կարողություններով/ հնարավորություններով մարդ, անկարողունակ, ՀՈՒԱ («հաշմանդամություն ունեցող անձ» արտահայտության հապավումը), ԿԱՊԿՈՒ («կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող» արտահայտության հապավումը), հատուկ կարիքներով անձ, ֆունկցիոնալ խանգարում ունեցող մարդ
Հաշմանդամություն չունեցող անձ	Նորմալ, առողջ, սովորական
Անվասայլակից օգտվող անձ, անվասայլակով տեղաշարժվող անձ, հենաշարժողական խնդիրներ ունեցող մարդ	Անվասայլակին գամված, սայլակավոր մարդ
Ի ծնե / մանկուց հաշմանդամություն ունեցող անձ	Ի ծնե արատ, դժբախտություն
Մանկական ուղեղային կաթված ունի	Տառապում է մանկական կաթվածով, կաթվածահար
Տարել է պոլիոմիելիտ, պոլիոմիելիտի հետևանքով հաշմանդամություն ունեցող անձ, հիվանդություն տարած մարդ, հաշմանդամություն է ձեռք բերել ինչ-որ բանի անոյունքում	Տառապում է պոլիոմիելիտով, պոլիոմիելիտի հետևանքներից, պոլիոմիելիտի զոհ
Ֆիզիկական խնդիրներ ունեցող անձ	Կաղ, թոփալ
Մտավոր խնդիրներ ունեցող անձ (միայն չափահաս մարդկանց համար)	Թերհաս, մտավոր թերի, տհաս, թերամիտ թերզարգացած, հետամնաց, աննորմալ, դեբիլ, իմբեցիլ, արգելակված

Զարգացման խնդիրներ ունեցող երեխա, դանդաղ ընկալող երեխա, մտավոր զարգացման խնդիրներ ունեցող անձ, սովորելու դժվարություններ ունեցող անձ	Արգելակված, թերամիտ, դեբիլ
Կարճահասակ անձ, հասակի զարգացման խնդիրներ ունեցող անձ	Լիլիպուտ, գաճաճ, թզուկ
Դաունի համախտանիշ ունեցող անձ (երեխա)	Դաուն, մոնղոլոիդ, դաունիկ, դաունով հիվանդ, դաունով տառապող
Աուտիզմ ունեցող անձ (երեխա)	Աուտիկ
Էպիլեպսիա ունեցող անձ	Էպիլեպտիկ, ցնցումավոր
Հոգեկան առողջական խնդիրներ ունեցող անձ, սոցիալ-հոգեբանական խնդիրներ ունեցող անձ	Գիժ, հոգեկան
Կույր, տեսողության խնդիրներ ունեցող անձ, չտեսնող անձ, թույլ տեսողություն ունեցող անձ	Լրիվ կույր, քոռ
Լսողության խնդիրներ ունեցող անձ / երեխա, խուլ անձ	Խուլ-համր, խուլ, քյառ
Շփման դժվարություններ ունեցող անձ, հաղորդակցման դժվարություններ ունեցող անձ, խոսելու դժվարություններ ունեցող անձ	Համր, լալ, կակազող

ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- Երբ Ձեզ ծանոթացնում են հաշմանդամություն ունեցող անձին, շատ բնական է սեղմել նրա ձեռքը. նույնիսկ նրանք, ովքեր դժվարությամբ են ձեռքը շարժում կամ օգտվում են պրոթեզից, կարող են սեղմել Ձեր ձեռքը աջ կամ ձախ ձեռքով, ինչը լիովին ընդունելի է: Եթե մարդը չի կարող ձեռք սեղմել, ողջունեք նրան գլխի շարժումով կամ ժպիտով:
- Դիմե՛ք անձին ուղղակիորեն: Երբ զրուցում եք հաշմանդամություն ունեցող անձի հետ, դիմեք անմիջապես նրան, այլ ոչ նրա ուղեկցող անձին, օգնականին կամ սուրդոթարգմանչին:
- Երբ երկար զրույց եք վարում անվասայլակից օգտվող անձի հետ, ինքներդ նստեք աթոռին, կամ, եթե դա հնարավոր չէ, ծնկի իջեք, որպեսզի Ձեր և նրա աչքերը գտնվեն մի մակարդակի վրա: Նույնը վերաբերում է նստած դիրքում գտնվող ցանկացած այլ անձանց, ինչպես նաև ցածրահասակ անձանց հետ զրույցներին:
- Եթե հանդիպում եք չտեսնող անձի, անպայման ասեք Ձեր անունը և այն մարդկանց անունները, որոնք Ձեզ հետ են: Եթե Դուք խմբում եք, ապա խոսելիս նշեք, թե ում եք դիմում տվյալ պահին և կրկնեք Ձեր անունը:

Ճաշասեղանի շուրջը նստելիս՝ չտեսնող անձի համար համառոտ նկարագրեք սեղանի վրա գտնվող իրերի և ուտեստների դասավորվածությունը:

- Երբեք մի հենվեք սայլակ օգտագործող անձի սայլակի բռնակների վրա (նույնիսկ հանգստանալու նպատակով): Սայլակը տվյալ մարդու անձնական տարածքն է:
- Եթե անձն ունի լսողության խնդիր՝ իր հետ խոսելիս նստեք այնպես, որ լույսը Ձեզ վրա ընկնի, խոսելիս մի փակեք ձեռքով կամ որևէ առարկայով Ձեր բերանը. չլսող անձինք հաճախ կարդում են ըստ շուրթերի:
- Մի շփոթվեք, եթե «վրիպում» եք թույլ տվել, ասելով՝ «Կտեսնվենք» կամ «Դուք լսե՞լ եք այդ մասին» այն անձին, որը չի կարող տեսնել կամ լսել: Տեսության և լսողական խնդիրներ ունեցող անձինք հաճախ օգտագործում են այս նույն արտահայտությունները:
- Կույր անձին ուղեկցելիս քայլեք նրանից մի փոքր առաջ:
- Եթե Ձեզ թվում է, թե հաշմանդամություն ունեցող անձին օգնություն է պետք, հարցրեք նրան այդ մասին: «Վատագույն» դեպքում նա կմերժի օգնության առաջարկը: Եթե օգնություն, իսկապես, պետք է, սպասեք, մինչև այն ընդունեն, հետո հարցրեք, ինչ և ինչպես անել:
- Հաշմանդամություն ունեցող անձինք ֆիզիկական, հոգեկան, մտավոր կամ զգայական դժվարություններ ունեցող մարդիկ են: Պետք չէ երկար ժամանակ ակնապիշ նայել նրանց:
- Պետք չէ հաշմանդամություն ունեցող անձին ավելորդ խնամք տրամադրել. թույլ տվեք նրան լինել հնարավորինս ինքնուրույն:
- Թույլ տվեք Ձեր երեխային խոսել հաշմանդամություն ունեցող մարդկանց հետ: Ցավալի է, երբ ծնողները արգելում են նման շփումը. երեխաները շատ զգայուն են:
- Մի լարվեք և եղեք բնական:

Գյումրի 2019